ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԷԱՃ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ

ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պետական պահպանության ծառայությունը, որը գտնվում է ք. Երևան Պռոշյան փ. 1-ին փակուղի 20 հասցեում, ստորև ներկայացնում է ՊՊԾ-ԷԱՃԾՁԲ-2024/1 ծածկագրով ԷԱՃ ընթացակարգի արդյունքում 24.01.2024թ. կնքված ՊՊԾ-ԷԱՃԾՁԲ-2024/1-1 գնման Պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2024թ.-ի հունվարի 30-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

**Փոփոխության նկարագրություն և հիմավորում:** Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար ՀՀ պետական բյուջեով ֆինանսական միջոցեր նախատեսվել են, Կողմերը եկան համաձայնության հաստատել Պայմանագրի հավելված 3-ը (վճարման ժամանակացույցը):

Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված արհեստական փոփոխությունների շարքին:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող ՝ Կարեն Գասպարյանին:

Հեռախոս ՝ 010 – 53-23-58

Էլ. Փոստ ՝ karen-gasparyan89@mail.ru

Պատվիրատու ՝ ՀՀ պետական պահպանության ծառայություն

# ЗАЯВЛЕНИЕ

## ОБ ИЗМЕНЕНИИ В ДОГОВОРЕ ПОДПИСАННОМ В РАМКАХ ПРОЦЕДУРЫ ЗАКУПКИ ПО ЭЛЕКТРОННОМУ АУКЦИОНУ

Заказчик, Служба государственной охраны Республики Армения, которая находится по адресу г. Ереван ул. Прошян 1-ый тупик 20, ниже представляет краткую информацию об изменении (далее — Изменение), внесенном 30 января 2024 года в подписанный договор купли-продажи под кодом PPC-EATsDzB-2024/1-1 (далее — Договор) заключенный от 24.01.2024г. в результате процедуры закупки под кодом PPC-EATsDzB-2024/1.

**Описание и обоснование изменения.** Основываясь на том факте, что для оказания услуг, предусмотренных Договором, в Государственном бюджете Республики Армения предусмотрены финансовые средства, стороны пришли к соглашению утвердить приложение 3 к Договору (график платежей).

Данная поправка не входит в число искусственных поправок, предусмотренных законодательством РА.

За дополнительной информацией, связанной с этим объявлением, вы можете обратиться к секретарю оценочной комиссии Карену Гаспаряну.

Телефон: 010-53-23-58

Электронная почта : karen-gasparyan89@mail.ru

Заказчик: Служба государственной охраны РА

***ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1***

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

N ՊՊԾ-ԷԱՃԾՁԲ-2024/1-1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան <<30>> <<01>> 2024թ.

ՀՀ պետական պահպանության ծառայությունը, այսուհետ՝ <<Պատվիրատու>>, ի դեմս ՀՀ պետական պահպանության ծառայության պետի պարտականությունները կատարող Ա. Գասպարյանի, որը գործում է <<Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ պետական պահպանության ծառայության կանոնադրության հիման վրա, մի կողմից և <<ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ>> ԲԲԸ-ն, այսուհետ՝ <<Կատարող>>, ի դեմս տնօրեն Հ. Եսայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 24.01.2024 թվականին կնքված N ՊՊԾ-ԷԱՃԾՁԲ-2024/1-1 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան և գործողության ժամկետը

1.1 Պայմանագրով նախատեսված ծառայությունների ձեռք բերման համար ՀՀ պետական բյուջեով ֆինանսական միջոցներ նախատեսվել են, ինչով պայմանավորված կողմերը կնքեցին սույն Համաձայնագիրը, ըստ որի Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ձևով և ժամկետներում Պատվիրատուին մատուցել Պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունները (այսուհետ՝ ծառայություն), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ ծառայությունը և վճարել դրա համար:

1.2 Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 25.12.2024 թվականը ներառյալ:

1.3 Կողմերը եկան համաձայնության Պայմանագրի հավելված N3-ը հաստատել ներքոհիշյալ խմբագրությամբ՝

## 2 Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրի պայմաններով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

Սույն Համաձայնագիրը և հավելվածը կազմված են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| ՀՀ պետական պահպանության ծառայություն | ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ ԲԲԸ |
| ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20 | Հասցե՝ ք. Երևան, Ազատության 24/1 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | Հայէկոնոմբանկ ԲԲԸ |
| Հ/h 900011004497 | Հ/h 163004038861 |
| ՀՎՀՀ 00006796 | ՀՎՀՀ 02500052 |
| Պետի պատականությունների կատարող Ա. Գասպարյան | Տնօրեն Հ. Եսայան |

Հավելված N 3

24/01/2024թ. կնքված

ՊՊԾ-ԷԱՃԾՁԲ-2024/1-1 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
| | | | Հնվ. | Փտր. | Մրտ. | Ապր. | Մայ. | Հուն. | Հուլ. | Օգս. | Սեպ. | Հոկ. | Նոյ. | Դեկ. | Ընդամենը |
| 1 | 72411100/503 | համացանցային ծառայություններ մատուցողներ (isp) | - | 90000 | 180000 | 270000 | 360000 | 450000 | 540000 | 630000 | 720000 | 810000 | 900000 | 1080000 | 1080000 |
| 2 | 92221120/503 | թվային հեռուստատեսություն | - | 59000 | 118000 | 177000 | 236000 | 295000 | 354000 | 413000 | 472000 | 531000 | 590000 | 699996 | 699996 |
| Ընդամենը | | | | | | | | | | | | | | | 1779996 (մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասունինը հազար ինը հարյուր իննսունվեց) ՀՀ դրամ |

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պետական պահպանության ծառայություն | ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ ԲԲԸ |
| ք.Երևան, Պռոշյան փ.1-ին փակուղի 20 | Հասցե՝ ք. Երևան, Ազատության 24/1 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | Հայէկոնոմբանկ ԲԲԸ |
| Հ/հ 900011004497 | Հ/հ 163004038861 |
| ՀՎՀՀ 00006796 | ՀՎՀՀ 02500052 |
| Պետի պատականությունները կատարող Ա. Գասպարյան | Տնօրեն Հ. Եսայան |